ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«29» «հոկտեմբերի» 2025 թվական № 422-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԱՋԱԿՑՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ, ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N 88-Լ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով և հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 9-րդ և 20-րդ ենթակետերը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել շրջակա միջավայրի նախարարության հիմնական մասնագիտական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների, էկոպարեկային ծառայության, համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպությունների, փակ բաժնետիրական ընկերության, պետական հիմնարկի գործունեության համակարգման հետևյալ բաշխումը.

1) շրջակա միջավայրի նախարար Համբարձում Մաթևոսյան.

ա. միջազգային համագործակցության վարչություն,

բ. հասարակայնության հետ կապերի բաժին,

գ. առաջին բաժին,

դ. էկոպարեկային ծառայություն,

ե. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

2) շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Արամ Մեյմարյան.

ա. բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչություն,

բ. կլիմայական քաղաքականության վարչություն,

գ. «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

դ. «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

ե. «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

զ. «Խոսրովի անտառ» պետական արգելոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

է. «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

ը. «Արփի լիճ» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

թ. «Արգելոցապարկային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

ժ. «Հայաստանի բնության պետական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

3) շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Արա Մկրտչյան.

ա. իրավաբանական վարչություն,

բ. ռազմավարական քաղաքականության վարչություն,

գ. ջրային քաղաքականության վարչություն,

դ. մթնոլորտային քաղաքականության վարչություն,

ե. անտառային քաղաքականության վարչություն,

զ. հողերի և ընդերքի քաղաքականության վարչություն,

է. վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության վարչություն,

4) շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Վահե Դավթյան.

ա. թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման վարչություն,

բ. կենսառեսուրսների կառավարման վարչություն,

գ. ջրային ռեսուրսների կառավարման վարչություն,

դ. «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

ե. «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ,

զ. «Զվարթնոց ավիաօդերևութաբանական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն,

5) շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղար Սերգո Աթանեսյան.

ա. ֆինանսատնտեսական վարչություն,

բ. քարտուղարություն,

գ. մարդկային ռեսուրսների կառավարման բաժին:

2. Ուժը կորցրած ճանաչել շրջակա միջավայրի նախարարի 2025 թվականի մարտի 14-ի «Շրջակա միջավայրի նախարարության հիմնական մասնագիտական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների, էկոպարեկային ծառայության, համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպությունների, փակ բաժնետիրական ընկերության և պետական հիմնարկի գործունեության համակարգումը սահմանելու և շրջակա միջավայրի նախարարի 2024 թվականի մարտի 26-ի N 93-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 88-Լ հրամանը:

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

10/29/2025

X

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Երևան